


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 90213 գործարքներ, որոնց քանակը 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 2.0%-ով:


2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ



իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 36390 օտարման գործարքների 87.3% կազմել են առուվաճառքները, 11.9%՝ նվիրատվությունները և 0.8%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 38.5% արձանագրվել է Երևան քաղաքում իսկ 38.1%՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 18.1%-ով: 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 11830 առուվաճառքի գործարքների 63.1% արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 10.5%-ով:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

<i>Համայնքներ</i>	<i>Նվազագույն և առավելագույն գները 2006թ. 9 ամիսներին /դրամ/</i>	<i>Միջին գները /դրամ/</i>	
		<i>9 ամիսներ 2006թ.</i>	<i>9 ամիսներ 2005թ.</i>
Կենտրոն	158500-900000	369900	276600
Արաբկիր	113200-771000	291100	226400
Քանաքեռ-Զեյթուն	90600-362900	176900	138500
Նոր-Նորք	90600-327800	165600	129100
Ավան	81500-226300	149100	118900
Էրեբունի	72400-293400	145400	113900
Շենգավիթ	72400-399400	176900	137400
Դավթաշեն	90600-282100	183000	141000
Աջափնյակ	90600-451100	165800	133400
Մալաթիա-Սեբաստիա	90600-271900	162500	129500
Նուբարաշեն	54300-137500	105300	63800
<i>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</i>	<i>54300-900000</i>	<i>190100</i>	<i>146300</i>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ շինության շուկայական միջին գների աճը կազմել է 29.9%:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 4065 բնակարաններ, որոնց քանակը 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 11.4%-ով:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները /դրամ/ 2006թ. 9 ամիսներին	Միջին գները /դրամ/	
			9 ամիսներ 2006թ.	9 ամիսներ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	36400 - 95000	60700	43100
	Ապարան	13600 - 28000	25300	20200
	Թալին	11400 - 34800	24000	18800
Արարատ	Արտաշատ	25000 - 137780	47100	33800
	Մասիս	36400 - 96100	56100	39900
	Վեդի	22700 - 65300	38700	24000
	Արարատ	20400 - 75100	40100	26900
Արմավիր	Վաղարշապատ	50000 - 159100	81400	65500
	Արմավիր	27300 - 125200	53200	39100
	Մեծամոր	18200 - 67600	34300	20200
Գեղարքունիք	Սևան	18200 - 88200	34600	23000
	Գավառ	13600 - 30000	24900	18400
	Մարտունի	22700 - 67500	38100	24400
	Վարդենիս	9100 - 30000	20200	12500
	Ճամբարակ	5900 - 31100	12700	9200
Լոռի	Վանաձոր	27300 - 115200	48000	35400
	Ստեփանավան	15900 - 31700	24100	20000
	Սպիտակ	18200 - 57300	32900	23400
	Այվերդի	9100 - 25000	20100	15000
	Տաշիր	11400 - 33300	19800	16700
	Թումանյան	4100 - 11300	5200	5100
	Շամլուղ	2300 - 8300	2800	2800
Ախթալա	6800 - 16000	10400	10400	
Կոտայք	Արուսյան	45400 - 184700	91400	65700
	Նոր Հաճն	40900 - 101000	62300	46000
	Բյուրեղավան	22700 - 79800	43400	30000
	Եղվարդ	31800 - 88200	57400	37700
	Հրազդան	20400 - 73400	35900	26400
	Ծաղկաձոր	18200 - 88800	70000	50000
	Չարենցավան	25000 - 78400	40100	28200
Շիրակ	Գյումրի	27300 - 127100	47800	38700
	Արթիկ	15900 - 61500	29700	19900
	Մարալիկ	8200 - 30000	21400	16800
Սյունիք	Գորիս	20400 - 79300	50500	32200
	Կապան	22700 - 91400	40800	24600
	Սիսիան	18200 - 62700	33600	22600
	Մեղրի	13600 - 43300	27000	17500
	Ագարակ	9100 - 31100	19300	15000
	Քաջարան	9100 - 45600	24400	12800
Վայոց Ձոր	Դաստակերտ	4500 - 11300	6400	6400
	Վայք	13600 - 52200	34600	23700
	Եղեգնաձոր	25000 - 117000	53100	34300

	Ջերմուկ	36400 - 189200	60500	37600
Տավուշ	Դիլիջան	18200 - 95800	42000	27600
	Իջևան	27300 - 99900	50700	32500
	Բերդ	18200 - 70600	28800	22300
	Նոյեմբերյան	9100 - 25000	17000	13200
	Այրում	12000 - 22000	18000	10000

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ շինության շուկայական միջին գների աճը կազմել է 42.1%:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 3925 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 933, մյուս մարզերում միասին վերցրած՝ 2992: 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 9.8%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է՝ 2.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 14.5%-ով:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. 9 ամիսներին /դրամ/	Միջին գները /դրամ/	
		9 ամիսներ 2006թ.	9 ամիսներ 2005թ.
Կենտրոն	135000 - 900200.0	380200	295000
Արաբկիր	90000 - 450100.0	297300	235200
Քանաքեռ-Զեյթուն	67500 - 270100.0	179800	142000
Նորք-Մարաշ	90000 - 450100.0	186100	172900
Ավան	90000 - 360100.0	151800	122500
Էրեբունի	67500 - 225100.0	148700	116700
Շենգավիթ	67500 - 202500.0	179200	139400
Դավթաշեն	90000 - 405100.0	185300	145100
Աջափնյակ	67500 - 270100.0	168300	137600
Մալաթիա-Սեբաստիա	67500 - 405100.0	165200	132800
Նուբարաշեն	40500 - 155000.0	107400	67500
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	40500 - 900200.0	195400	155200

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել են 25.9 %:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժներն ունեն աճի միտում:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. 9 ամիսներին /դրամ/	Միջին գները /դրամ/	
			9 ամիսներ 2006թ.	9 ամիսներ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	29100 - 98000	63300	45900
	Ապարան	13500 - 36000	26900	21300
	Թալին	13600 - 36000	25200	20000
Արարատ	Արտաշատ	22500 - 141000	48300	34800
	Մասիս	25000 - 98000	57300	41000
	Վեդի	22500 - 67500	39900	26100
	Արարատ	22500 - 76800	41200	28000
Արմավիր	Վաղարշապատ	54100 - 164200	82600	66500
	Արմավիր	22500 - 126000	54300	40200
Գեղարքունիք	Սևան	18000 - 90600	38900	24700
	Գավառ	10000 - 37800	26100	20100
	Մարտունի	22200 - 68000	39500	26100
	Վարդենիս	11000 - 32500	21800	14400
	Ճամբարակ	4500 - 32600	14300	10900
Լոռի	Վանաձոր	23200 - 116800	49300	36700
	Ստեփանավան	13500 - 40200	26800	25800
	Սյիտակ	20000 - 58600	34300	24500
	Ալավերդի	9000 - 31500	21500	16200
	Տաշիր	9000 - 36500	21300	18000
	Թումանյան	4500 - 18000	6800	6300
	Շամլուղ	2300 - 13500	4300	4000
	Ախթալա	9000 - 22500	11900	11300
Կոտայք	Աբովյան	45500 - 191600	93300	67100
	Նոր Հաճն	42500 - 105800	63400	47400
	Բյուրեղավան	22200 - 81400	44500	31100
	Եղվարդ	30200 - 90300	58400	39100
	Հրազդան	18000 - 74000	37200	28300
	Ծաղկաձոր	40000 - 112500	71400	52900
	Չարենցավան	18000 - 79300	41300	29900
Շիրակ	Գյումրի	28200 - 129000	49400	43200
	Արթիկ	13300 - 62400	30900	21200
	Մարալիկ	13500 - 40000	23400	18000
Սյունիք	Գորիս	18000 - 79900	51800	33100
	Կապան	22000 - 94000	41800	25900
	Սիսիան	20000 - 66400	34800	23500
	Մեղրի	13500 - 44800	28200	18800
	Ազարակ	13300 - 36000	20900	16400
	Դաստակերտ	4500 - 18000	8600	7900

Վայոց Ձոր	Վայք	26000 - 55600	35900	25000
	Եղեգնաձոր	22200 - 118400	54400	35600
	Ջերմուկ	26500 - 191600	35500	26300
Տավուշ	Դիլիջան	26600 - 97500	43000	31000
	Իջևան	22200 - 101100	51600	33500
	Բերդ	20000 - 71200	30000	23100
	Նոյեմբերյան	9000 - 31500	18100	14400
	Սյրում	5200 - 28000	19200	11200

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել են 37.6 %:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 13428 միավոր /17073.73 հա/ հողեր, որից Երևանում՝ 1571 միավոր /497.74 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն օտարվել են 901 միավոր /445.15 հա/ հողեր, որից Երևանում՝ 609 միավոր /379.57 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6136 միավոր /15942.31 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /1.24 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 4839 միավոր /475.02 հա/, որից Երևանում՝ 829 միավոր /91.63 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 2057 միավոր /336.81 հա/, որից Երևանում՝ 568 միավոր /197.81 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 299 միավոր /268.79 հա/, որից Երևանում՝ 162 միավոր /207.06 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 75 միավոր /31.40 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 20 միավոր /8.41 հա/: Երևանում էներգետիկայի օբյեկտների հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- ջրային հողեր՝ 2 միավորի /11.00 հա/: Երևանում ջրային հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 12635 միավորի /16673.88 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 1493 միավոր /487.46 հա/, նվիրատվության գործարքներ՝ 685 միավոր /360.57 հա/, որից Երևանում՝ 56 միավոր /8.30 հա/ և փոխանակության գործարքներ՝ 108 միավոր /39.28 հա/, որից Երևանում՝ 22 միավոր /1.98 հա/:

Հանրապետությունում 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 31.8%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 6.5%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 56.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 7.2 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի

նկատմամբ՝ 10.4 անգամ, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ 20 գործարքով և ջրային հողերի նկատմամբ՝ 2 գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 10471.60 հա, որից 10412.65 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 35.7%-ը կամ 4510 գործարքներ /9190.90 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 721 միավոր /391.61 հա/, իսկ 64.3%-ը կամ 8123 միավորը /7460.74 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 772 միավոր /95.85 հա/: 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 2 գործարք /22.23 հա/:

Ստորև ներկայացվում է 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների, էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերի և վարձակալության իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	156	205.70	161	27.73	404	158.18	12	1.24	4	0.93	606	59.12	150	34.56
Արագածոտն	331	1487.48	6	2.06	69	8.34	93	5.66	414	366.65	4	0.27	356	36.03	24	3.18
Արարատ	220	473.96	27	4.83	241	23.27	172	9.52	851	482.92	6	0.99	611	55.29	14	2.31
Արմավիր	505	5373.63	8	5.24	15	1.42	109	2.44	974	5039.03	2	2.24	485	43.78	65	3.84
Գեղարքունիք	13	13.63	2	0.26	64	6.26	145	10.61	112	132.00	0	0.00	89	10.52	16	3.55
Լոռի	7	12.88	5	1.66	11	0.37	68	13.98	240	183.68	2	0.30	60	6.25	34	0.65
Կոտայք	358	865.92	40	33.45	206	19.98	223	40.14	950	398.53	6	1.51	1129	115.23	38	10.66
Շիրակ	24	50.76	5	3.49	178	6.65	186	5.24	128	142.02	2	0.17	54	5.72	13	0.30
Սյունիք	1	2.00	11	3.33	7	0.74	86	3.98	127	139.08	1	0.05	21	1.83	18	0.73
Վայոց Ձոր	59	200.55	4	1.26	5	0.20	127	6.25	77	71.03	0	0.00	38	5.34	6	0.75
Տավուշ	51	38.86	5	0.51	19	1.98	38	13.36	269	85.60	1	0.12	63	5.17	1	0.06
Ընդամենը	1569	8519.67	269	261.79	976	96.94	1651	269.36	4154	7041.78	28	6.58	3512	344.28	379	60.59

Ստորև ներկայացվում է 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների, էներգետիկայի օբյեկտների և ջրային հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	637	380.70	156	205.70	103	22.98	378	152.02	84	10.91	0	0.00	0	0.00	58	4.75	26	6.16
Արագածոտն	27	1.26	1	0.35	0	0.00	26	0.91	472	1502.29	331	1487.48	5	1.72	69	8.34	67	4.75
Արարատ	89	4.81	13	1.83	3	0.37	73	2.61	571	506.78	220	473.96	14	3.01	238	22.90	99	6.91
Արմավիր	16	3.17	2	2.88	1	0.05	13	0.24	621	5379.57	505	5373.63	6	2.37	14	1.37	96	2.20
Գեղարքունիք	13	1.63	1	0.06	0	0.00	12	1.57	211	29.14	13	13.63	1	0.20	64	6.26	133	9.05
Լոռի	41	12.75	5	1.66	3	0.03	33	11.06	50	16.14	7	12.88	0	0.00	8	0.34	35	2.92
Կոտայք	76	35.49	32	30.66	1	0.08	43	4.75	750	923.86	357	865.78	8	2.79	205	19.90	180	35.39
Շիրակ	21	0.60	0	0.00	3	0.16	18	0.44	372	65.54	24	50.76	5	3.49	175	6.49	168	4.80
Սյունիք	53	5.62	8	2.91	3	0.34	42	2.37	52	4.44	1	2.00	3	0.43	4	0.40	44	1.61
Վայոց Ձոր	37	3.63	3	0.35	0	0.00	34	3.28	155	201.48	56	197.40	1	0.91	5	0.20	93	2.97
Տավուշ	48	8.05	5	0.50	13	1.44	30	6.11	65	46.65	51	38.86	0	0.00	6	0.54	8	7.25
Ընդամենը	1058	457.71	226	246.90	130	25.45	702	185.36	3403	8686.8	1565	8516.38	43	14.92	846	71.49	949	84.01

Հանրապետությունում 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ընդլայնման նպատակով՝ ուղղակի վաճառքի 4 գործարքներ /3.29 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 35.7%: Ընդ որում Երևանում նվազել է 48.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 41.6%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 12.5%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ աճել է 66.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել է 4.5 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 2.2 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ աճել է 25 գործարքով, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 4 գործարքով և ջրային հողերի նկատմամբ՝ աճել է 2 գործարքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Արավելագույն	Միջին			Նվազագույն	Արավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	264	491.96	4.4	6630.2	402.9	266	229.25	362.2	6772.5	2186.8
Ապարան						51	43.80	90.6	767.6	311.6

Թային	67	995.52	33.7	825.8	112.2	87	81.73	90.6	758.5	300.8
Ծաղկահովիտ						6	10.92	77.0	948.2	144.6
Արարատի մարզ										
Արտաշատ	83	122.67	34.8	5966.9	837.0	398	267.01	335.1	5418.0	1151.6
Մասիս	58	188.16	11.0	1419.5	504.4	163	73.07	181.1	6772.5	1519.6
Վեդի	79	163.14	20.3	2500.0	218.5	273	137.61	203.8	4515.0	938.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	64	387.71	2.3	1789.1	502.5	218	215.81	294.3	4063.5	748.3
Բաղրամյան	244	3586.41	6.3	837.4	98.3	259	3926.42	90.6	677.3	462.8
Վաղարշապատ	197	1399.51	2.3	1411.2	337.5	469	823.14	443.7	9030.0	1275.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						18	5.65	190.2	496.7	314.6
Ճամբարակ	1	1.20	75.0	1733.3	514.9	33	23.30	45.3	541.8	128.2
Մարտունի						16	4.68	45.3	1806.0	442.1
Սևան	12	12.43	219.3	219.3	219.3	2	2.94	45.3	451.5	176.9
Վարդենիս						40	93.49	27.2	532.8	193.7
Լոռու մարզ										
Այվերդի						123	71.09	163.0	2483.3	390.2
Գուգարք	1	0.38	368.0	368.0	368.0	13	11.09	226.4	2709.0	866.2
Սպիտակ						11	5.85	226.4	1490.0	474.8
Ստեփանավան	6	12.50	94.7	540.0	415.2	63	65.74	90.6	2257.5	316.9
Տաշիր						15	20.15	45.3	451.5	189.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	110	186.75	15.3	854.2	274.6	407	124.63	271.7	11287.5	2872.4
Եղվարդ	116	385.30	13.3	2220.9	449.3	458	236.29	172.1	11287.5	1995.6
Հրազդան	131	293.74	45.2	4687.5	330.4	76	34.55	113.2	2709.0	698.3
Շիրակի մարզ										
Այուրյան	3	35.15	229.3	498.8	364.1	45	47.25	249.0	1693.1	383.9
Ամասիա						13	27.97	36.2	237.0	95.4
Անի	5	8.51	85.5	282.2	183.4	20	19.01	108.7	361.2	195.9
Աշոցք						27	29.08	45.3	112.9	102.5
Արթիկ	16	7.10	43.0	888.9	342.5	23	18.70	63.4	1083.6	154.5
Սյունիքի մարզ										
Գորիս						38	58.70	90.6	673.3	292.3
Կապան	1	2.00	195.5	195.0	195.0	3	2.55	54.3	841.6	210.1
Մեղրի						21	4.15	181.1	1784.2	411.5
Սիսիան						65	73.67	45.3	631.2	169.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	28	185.15	35.9	341.0	142.7	50	46.28	117.7	2524.8	1185.3
Վայք	28	12.25	35.9	1850.0	235.1	25	24.03	54.3	1430.7	463.0
Տավուշի մարզ										
Բերդ						105	27.40	45.3	841.6	311.9
Իջևան	44	9.41	81.3	1601.9	420.7	17	3.24	240.0	1683.2	754.4
Նոյեմբերյան	7	29.45	207.0	1315.0	774.2	147	54.96	45.3	3509.5	430.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	65	77889.0	73.6	2375.4	311.1	337	331460.0	113.2	3612.0	1977.0
Ապարան						7	14460.0	113.2	632.1	161.3
Թալին	4	5524.0	116.7	200.9	145.1	7	9636.0	45.3	361.2	70.2
Ծաղկահովիտ						1	30.0	45.3	361.2	64.8
Արարատի մարզ										
Արտաշատ	158	163122.0	143.0	1499.0	373.2	145	159108.0	135.8	2709.0	724.4
Մալիս	60	45887.0	193.8	1000.0	665.2	322	248999.0	135.8	9030.0	935.1
Վեդի	20	20000.0	120.0	130.4	124.6	137	138432.0	113.2	993.3	528.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	9	8700.0	142.2	277.7	245.5	124	118493.0	135.8	2257.5	894.6
Բաղրամյան						3	3600.0	81.5	270.9	109.8
Վաղարշապատ	5	5000.0	631.0	632.0	631.5	352	309799.0	135.8	4515.0	1214.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	31	21000.0	88.0	1749.6	213.2	13	17596.0	135.8	903.0	306.6
Ճամբարակ	28	36000.0	47.5	145.2	114.2	10	11353.0	45.3	135.5	74.7
Մարտունի						42	48045.0	90.6	451.5	176.4
Սևան	5	5600.0	340.9	684.2	566.8	4	3210.0	90.6	903.0	119.4
Վարդենիս						20	24983.0	45.3	225.8	81.5
Լոռու մարզ										
Ալավերդի						6	9090.0	67.9	270.9	96.4
Գուգարք	2	1250.0	1104.0	1725.0	1414.5	26	19884.0	67.9	2347.8	492.0
Սպիտակ						8	8900.0	63.4	451.5	100.7
Ստեփանավան	6	2108.0	74.0	276.7	226.3	17	20211.0	45.3	270.9	80.2
Տաշիր						2	3326.0	45.3	135.5	62.1
Կոտայքի մարզ										
Արովյան	135	125055.0	276.0	4523.5	1488.4	551	557294.0	135.8	6772.5	1453.7
Եղվարդ	36	42034.0	162.0	2374.9	1068.9	512	528691.0	135.8	6772.5	1610.4
Հրազդան	34	31905.0	74.5	1490.0	335.6	64	64508.0	135.8	9030.0	1030.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	113	33260.1	290.4	26677.4	1568.8	28	22018.2	113.2	1535.1	270.4
Ամասիա								45.3	135.5	62.1
Անի	1	800.0	40.6	40.6	40.6	7	9478.0	67.9	180.6	85.5
Աշոցք						2	6170.0	40.8	135.5	55.2
Արթիկ	61	30798.0	42.0	2200.8	368.4	17	19531.5	67.9	925.6	124.3
Սյունիքի մարզ										
Գորիս						10	9235.0	67.9	541.8	205.0
Կապան	4	4000.0	34.0	1666.9	691.4	1	300.0	67.9	632.1	188.3
Մեղրի						6	3550.0	67.9	406.4	105.7
Միսիան						4	5190.0	67.9	406.4	119.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	2000.0	682.3	691.2	689.2	32	44667.0	67.9	1128.8	224.6
Վայք						5	6940.0	77.0	632.1	103.4
Տավուշի մարզ										

Բերդ						1	1320.0	45.3	632.1	78.2
Իջևան	5	4476.0	94.7	289.8	172.2	54	43994.0	67.9	1354.5	325.9
Նոյեմբերյան	1	900.0	291.2	291.2	291.2	6	5605.0	45.3	632.1	101.6

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 3 գործարքներ 1.23 հա մակերեսով, ընդ որում 2-ը՝ Գեղարքունիքի /1.00 հա/ և 1-ը՝ Արարատի /0.23 հա/ մարզերում:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6071 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 25.0% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն նվազել է 28.2%-ով:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 449 բնակարանների, 225 անհատական բնակելի տների, 2069 հասարակական, 321 արտադրական նշանակության օբյեկտների, 2968 միավոր /23410.76 հա/ հողերի, 36 ավտոտնակների և 3 այգետնակի վարձակալության գործարքներ:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 150 վարձակալության գործարքների քանակները 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ նվազել են 48.1%-ով:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 23410.76 հա հողերից 29.23 հա վարձակալվել են Երևանում: Մյուս մարզերում վարձակալված 23381.52 հա հողերի 95.8%-ը կամ 22408.69 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության, 52.73 հա՝ բնակավայրերի, 22.22 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 12.31 հա՝ էներգետիկայի օբյեկտների, 149.57 հա՝ անտառային, 647.39 հա՝ ընդերքօգտագործման, 5.45 հա՝ ջրային, 82.88 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 0.30 հա՝ տրանսպորտի օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 4649.82 հա, որից 4578.89 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 13269.73 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	20	2073.00	294	1397.88
Արարատ	11	1028.17	128	666.03
Արմավիր	1	5.00	72	891.06
Գեղարքունիք	49	2599.76	239	1699.39
Լոռի	7	1628.00	347	1239.78
Կոտայք	8	798.00	212	877.59
Շիրակ	16	1127.00	363	1234.45

Սյունիք	29	3675.00	107	903.89
Վայոց Ձոր	20	295.80	37	163.19
Տավուշ	2	40.00	29	65.71
Ընդամենը	163	13269.73	1828	9138.97

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9301 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.3%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 43.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /50.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.8%/, առանձնատների /19.6%/ և հողերի /10.7%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4842 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ աճել է 45.9%-ով:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 2763.72 հա մակերեսով հողեր, որից 22.11 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 97.9% կամ 2704.45 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 1575.65 հա, որից 1574.93 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 114 և 162 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 14.0%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում /35.5%:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի նվազման միտում:

2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 15081 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2005թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 0.6%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /39.3%/: Առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն